ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-50 6.05 2013թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ եմ ներկայացնում 2013 թվականի ապրիլ ամսվա ընթացքում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի ընդունած որոշումը, արձակած կարգադրությունները:

Առդիր 4 էջ:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 4190-13
«06» 05 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25» ապրիլի 2013թ. թիվ 6

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 45-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին, կետով հաշվի առնելով համայնքի բնակչության կրած վնասները և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Է.Արաբյան) սույն կարգադրությամբ ուսումնասիրել և եռօրյա ժամկետում ներկայացնել՝ 2013թ.-ի ապրիլի 24-ի և 25-ի գիշերը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով, համայնքի բնակիչների ցրտահարված տարածքների և կրած վնասների չափերը:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Պտղունք համայնքի
ղեկավարի 2013 թվականի
ապրիլի 25-ի թիվ 6 կարգադրության

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՑՐՏԱՀԱՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ՝	Է.Արաբյան	- հ/ղ տեղակալ
անդամ՝	Հ.Ներսիսյան	- առաջատար մասնագետ (գյուղատնտես)
անդամ՝	Ա.Ավետիսյան	- առաջատար մասնագետ (հողաշինարար)
անդամ՝	Ե.Աղաջանյան	-ավագանու անդամ
անդամ՝	Ս.Գրիգորյան	-ավագանու անդամ(ջրբաշխ)
անդամ՝	Գ.Գրիգորյան	-համայնքի բնակիչ
անդամ՝	Ս.Ազիզյան	- համայնքի բնակիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«16» ապրիլ 2013թ. թիվ 12

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրաետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 1 որոշումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի սեփականատեր՝ Աշոտ Սարգսի Մխիթարյանին պատկանող տնամերձ հողամասին (ծածկագիր 064-001) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի Երևան-Էջմիածին խճուղի թիվ 106 հասցեի տնամերձ հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» ապրիլ 2013թ. թիվ 5

ՌՈԶԻԿ ՔԵՐՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի տնօրեն Ռոզիկ Քերոբի Խաչատրյանին 2013 թվականի ապրիլի 7-ին բարձր մակարդակով միջոցառում կազմակերպելու և անցկացնելու համար խրախուսել և տալ միանվագ դրամական պարգևատրում աշխատավարձի ամսական դրույքաչափով:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար Կ.Արթենյան